## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

# ՈՐՈՇՈՒՄ

<<31>> Հուլիսի 2023թ. N ՄՈ/1333-Ա

ք. Արմավիր

### «ԽԱՆՋՅԱՆԻ ԱՐՄԵՆ ԲԵՆԻԱՄԻՆԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԱՆՆԱ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ, 163-րդ և 164-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Աննա Հովսեփյանի 2023 թվականի հուլիսի 28-ի դիմումը.

ո ր ո շ ու մ  ե մ

1. «Խանջյանի Արմեն Բենիամինի Հակոբյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Աննա Հովսեփյանին տրամադրել 2022 թվականի ամենամյա հերթական երկարացված արձակուրդի մասը 2023 թվականի օգոստոսի 8-ից 21-ը ներառյալ՝ 10 աշխատանքային օր տևողությամբ:
2. Աննա Հովսեփյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Խանջյանի Արմեն Բենիամինի Հակոբյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Խանջյանի Արմեն Բենիամինի Հակոբյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ուսումնական գծով տնօրենի տեղակալ Հասմիկ Շաքրիկյանին:
3. 2023 թվականի օգոստոսի 8-ից 21-ը ներառյալ «Խանջյանի Արմեն Բենիամինի Հակոբյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ուսումնական գծով տեղակալ Հասմիկ Շաքրիկյանի աշխատավարձի վճարումն իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
4. Աննա Հովսեփյանի աշխատանքի մեջ համարել 2023 թվական օգոստոսի 22-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Недействительная подпись

X

VERIFIED OCSP 31.07.2023 13:41:56 GMT+4

Подписано: HOVHANNISYAN EDVARD 2001830505

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ... 04447253